Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7 ծածկագրով համակարգչային և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30.11.2021թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյան
Կ. Բարսեղյան
Լ. Սարիբեկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էին հանձնաժողովի անդամ՝ Գ. Հակոբյան

1. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, հետևյալը՝

Չափաբաժին N5
<<Կոմպասս>> ՍՊԸ

Տեխնիկական բնութագրի մասով

Առաջարկվող ապրանքի հզորությունը հստակ նշված չէ:

Չափաբաժին N6
<<Մովսեսյան>> ՍՊԸ

Տեխնիկական բնութագրի մասով

Առաջարկվող ապրանքի քաշը և չափսերը հստակ նշված չեն:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգ 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել 1.1 կետում նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 01.12.2021թ ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, մասնակիցների հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում դրանք կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել eauction.armeps.am համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում-կողմ -4, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվում է արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 02.12.2021թ. ժամը 15:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում-կողմ -4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Գ. Խաչատրյան

---------- Կ. Բարսեղյան

---------- Լ. Սարիբեկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան